

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԶՐՈ  
ՀՈԴԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ  
ԶՈՒԳԱԴՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ֆրանսերենի հոդերի համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մասնական հոդը, որը գործածվում է ոչ թվարկելի գոյականների հետ և առանձնացնում է դրանց ընդհանուր ծավալի անորոշ մասը: Լեզվի ժամանակակից փուլում մասնական հոդը զգալիորեն ընդլայնել է իր իմաստագործառական դրսևորումների սահմանները և կարող է հանդես գալ նաև թվարկելի գոյականների հետ: Իմաստային տեսանկյունից մասնական հոդը անորոշ հոդի տարատեսակ է, քանի որ այն առանձնացնում է ոչ թվարկելի զանգվածի մի մասը միայն, անորոշ հոդը, ինչպես գիտենք, առանձնացնում է դասի մեկ անդամին: Զեաբանական տեսանկյունից մասնական հոդը մոտենում է որոշյալ հոդին, քանի որ ծագումնաբանորեն կազմված է *de* նախդրի և որոշյալ հոդի *le, la, l'* ձևերից:

Լեզվաբանության մեջ բազմիցս խոսվել է եզակի անորոշ և մասնական հոդերի իմաստային նմանության մասին: Այսպես, Գ. Գիյոմը նշում է, որ «[*du, de la*] ձևերն իրենց գործառույթով գտնվում են *un* հոդի հետ միևնույն պլանում»<sup>1</sup>: Մ. Գրեխը նշում է, որ «մասնական հոդն իր արժեքով ոչ այլ ինչ է, եթե ոչ անթվարկելի իրողությունն նշանակող գոյականից առաջ կիրառվող անորոշ հոդ, որը ցույց է տալիս, որ խոսքը դրա անորոշ քանակի մասին է»<sup>2</sup>: Մ. Գալմիշը գտնում է, որ մասնական հոդն իր իմաստային արժեքով ավելի մոտ է անորոշ հոդի հոգնակի ձևին, քան եզակիին<sup>3</sup>:

Մյուս կողմից, լինելով մասնակիրություն-ամբողջականություն իմաստային հակադրության անդամ, մասնական հոդը որոշյալ հոդի հետ որոշակի շարակարգային պայմաններում գտնվում է լրացուցիչ բաշխման հա-

1 G. G u i l l a u m e. Le problème de l'article et sa solution dans la langue française. Paris, 1919, p. 60.

2 M. G r e v i s s e. Le bon usage, Grammaire française, 12eme edition. Paris. 1986, p. 911. Անորոշ և մասնական հոդի իմաստային նմանության մասին տե՛ս նաև R. M a r t i n. De la double "extensité" du partitif.– "Langue française". Paris, 1983, N 57, p. 34-42; И. Н. Л у к а щ у к. Значение и употребление партитивного артикля в современном французском языке. – Ученые записки МОПИ им. Н. Крупской, т. 64, М., 1958, с. 172-173; А. И. Р о х л е н к о. Об основном грамматическом значении частичного артикля. – Ученые записки ЛГПИ им. Герцена, т. 212, Л., 1959, с. 106-107; E. A. R e f e r o v s k a y a, A. K. V a s s i l i é v a. Essai de grammaire française. M.-L., 1964, p. 57.

3 M. G a l m i c h e. Note sur les noms de masse et le partitif.– "Langue française". Paris, 1986, N 72, p. 40-53: Տե՛ս նաև E. O. К о с т е ц к а я. Употребление артикля частичного. – "Иностранные языки в школе", М., 1949, N 4, с. 48–50.

րաբերության մեջ, հմմտ. Il achete normalement du pain au levain (Նա սովորաբար թթխմորի հաց է գնում) և Le pain est sur la table (Հացը սեղանին է): Մասնական հոգը կարող է արտահայտել նաև որոշյալ հոդին հատուկ ընդհանրական-հավաքական իմաստ, հմմտ. Dans ces endroits il y a du moustique (Այս վայրերում մոծակներ կան) և Le moustique pullule dans ces endroits (Այս վայրերում մոծակները վիստում են): Հոդի գուտ մասնական իմաստը հանդես է դալիս որպես ավելի լայն իմաստի քանակական անորոշության արտահայտման մասնավոր դեպք: Քանակական անորոշությունը քերականական իմաստ է, ի տարբերությունն ոչ թվարկելիության, որը բառային իմաստ է<sup>5</sup>:

Երբ մասնական հոգը չի արտահայտում քանակական անորոշության իմաստ, այսինքն՝ մասնակիություն, դրա կիրառումը հանգեցնում է բառիմաստի տեղաշարժի կամ գոյականի քերականական կարգի փոփոխության: Առաջին դեպքում գոյականը հանդես է գալիս փոխանվանական արժեքով, ինչպես՝ Elle lit du Balzac (Նա Բալզակ է կարդում) կամ un veau (հորթ) – du veau (հորթի միս): Երկրորդ դեպքում գործ ունենք մասնական հոդի ապագոյականացնող գոյականի միջոցով հատկանիշի իմաստի արտահայտման հետ, ինչպես՝ Il y a de l'homme dans le chien (Շան մեջ ինչ-որ մարդկային բան կա)<sup>6</sup>:

Անորոշ և որոշյալ հոդերի հետ ունեցած իմաստային ընդհանրություններով և դրանցից բխող գործառական առանձնահատկություններով էլ պայմանավորված է մասնական հոդի դործառության սահմանների ընդլայնումը: Փաստորեն, մասնական հոգը գործառում է քանակական անորոշության քերականական իմաստի և թվարկելիության – ոչ թվարկելիության բառային իմաստների միջև գոյություն ունեցող տարատեսակ հարաբերություններում, որոնք բովանդակության և արտահայտության պլանների միջև սիմետրիայի և ասիմետրիայի արդյունք են: Երկու պլանների սիմետրիայից և ասիմետրիայից էլ առաջանում են լեզվական միավորների, տվյալ դեպքում մասնական հոդի առաջնային և երկրորդային կիրառությունները: Նշենք, որ դուտ մասնականությունն արտահայտվում է քանակական անորոշության քերականական իմաստի և ոչ թվարկելիության բառային իմաստի միասնության միջոցով: Նշված երկու իմաստների միասնությունը պայմանավորված է մասնական հոդի ձևի և իմաստի միջև առկա սիմետրիայով: Մասնական հոդի երկրորդային կիրառությունները ձևի և իմաստի միջև ասիմետրիայի արդյունք են:

Մասնական հոդի իմաստադործառական առանձնահատկությունները և դրանց ընդհանրությունը անորոշ հոդի հետ կարելի է պարզաբանել առաջադրելով և լուծելով հետևյալ խնդիրները. 1) մասնական հոդի սիմետրիկ առանձնացնող գործառույթի և քանակական անորոշության քերականական իմաստի հակադրում անորոշ հոդի առանձնացնող գործառույթի և ո-

4 Մասնական և որոշյալ հոդերի մրցակցության մասին տե՛ս A. Reférov - s k a y a, A. K. V a s s i l i é v a. Նշվ. աշխ., էջ 60.

5 В. Г. Га к. Теоретическая грамматика французского языка. М., 2000, с. 192.

6 В. Г. Га к. Նշվ. աշխ., էջ 194.


րական անորոշության քերականական իմաստի հետ, 2) հոդնակիության  $\emptyset$  զրուկորում մասնականության դեպքում, 3) մասնական հոդի երկրորդային ընդհանրական-հավաքական, փոխանվանական և ապագոյականացնող գործառույթների բացահայտում: Այս խնդիրները կպարզաբանենք ստորև բերվող գծապատկերի միջոցով:

Թվարկելիութուն  
(թիվ)

Ոչ թվարկելիութուն  
(ոչ թիվ)

Եզակիութուն —  $A (un)$

$A_1 (du)$  — մասնակիութուն



Հոդնակիութուն —  $B (des)$

$B_1 (le)$  — ամբողջականութուն

Մասնական հոդի իմաստագործառական առանձնահատկությունները վերլուծելու և անորոշ հոդի հետ ունեցած ընդհանրությունները համակարգելու համար հիմք են ծառայելու գոյականի թվարկելիության (այսուհետև՝  $\theta$ ) և ոչ թվարկելիության (այսուհետև՝  $\theta_0$ ) իմաստները:  $\theta$ -ն  $A$ - $B$  ընդգրկման հարաբերությունն է, որտեղ  $A$ -ն դասի մեկ միավոր առարկանշանակող գոյականն է, իսկ  $B$ -ն՝ նույն դասի բազմաթիվ առարկաներ նշանակող գոյականը, այսինքն՝  $un_1+un_2+un_3+un_n=des$ :  $\theta$ -ն  $A$ - $B_1$  ընդգրկման հարաբերությունն է, որտեղ  $A$ -ը ոչ թվարկելի գոյականով անվանվող նյութի անորոշ մասն է, իսկ  $B_1$ -ը՝ ծավալն ամբողջությամբ, այսինքն՝  $du_1+du_2+du_3+du_n=le'$ :

Անորոշ և մասնական հոդերի գործառույթային նմանությունը պայմանավորված է ընդգրկման հարաբերությունների առկայությամբ. թվարկելի գոյականի դեպքում այդ գոյականով անվանվող առարկաների դասն ընդգրկում է այդպիսի առարկաների հոդնակիութուն, անորոշ հոդն առանձնացնում է դրանցից որևէ մեկը կամ բազմաթիվ այդպիսի առարկաներ, ոչ թվարկելի գոյականի դեպքում այդ գոյականով անվանվող նյութի

7 Վերաբերության տրամաբանական տեսությունների տեսանկյունից հնարավոր է նաև  $du_1+du_2+du_3+du_4=du_5$ , եթե մասը դիտվում է որպես ավելի փոքր մասնաբաժինների ամբողջություն: Մ. Գալմիչն այս առնչությամբ առաջարկում է նույնակազմ վերաբերության աքսիոմը (axiome de la reference homogene), այսինքն՝ որևէ նյութի ծավալին նույն նյութից ավելացնելով կամ այդ ծավալի որևէ մասը վերցնելով նյութը չի փոխում իր կազմությունը, և տվյալ նյութն անվանող գոյականը կվերաբերվի ինչպես դրա փոքր, այնպես էլ մեծ ծավալին (M. G a l m i c h e. Նշվ. աշխ., էջ 46): Ռ. Մարտենը նյութի ծավալի՝ ավելի փոքր մասնաբաժինների տարրալուծվելն անվանում է ենթամասի չափանիշ (critere de sous-ensemble), իսկ տվյալ ծավալին նույն նյութից ավելացնելու հետևանքով նյութի չփոփոխվելն անվանում է վերամիավորման չափանիշ (critere de reunion), այս երկու չափանիշները մասնական և անորոշ հոդերի համար հավասարաթեք չեն (տես R. M a r t i n. Նշվ. աշխ., էջ 36):

ողջ ծավալը բաղկացած է նույն նյութի տարբեր մասնաբաժիններից. և մասնական հոգն առանձնացնում է այդ ծավալի անորոշ մասը: Այսպիսով, գործառույթային առումով, երկու հոգերի սիմետրիկ դրսևորումը առանձնացման գործառույթն է: Վերը բերված գծապատկերում գործառույթային այս նմանությունն արտացոլված է AA<sub>1</sub> կետագծով:

Անորոշ և մասնական հոգերն ունեն նաև շարակարգային բնույթի երկու ընդհանրություն. 1) նախադաս որոշչին և ժխտական նախադասություններում խնդրին նախորդող դիրքերում մասնական հոգը, ինչպես և հոգնակի անորոշ հոգը, ունի իր դիրքային 'de' d' տարբերակները. Հմմտ. (1) և (2), (3) և (4) օրինակները.

- (1) Les puits sahariens sont de simples trous creusés dans le sable (Exupéry).  
Սահարայի ջրհորները ավաղի մեջ փորված հասարակ փոսեր են:
- (2) Il (Loiseau) vendait a très bon marche de très mauvais vin aux petits debitants des campagnes... (Maupassant).  
Նա (Լուազոն) էժան գնով շատ ցածրորակ դինի էր վաճառում գյուղացի մանրավաճառներին...
- (3) Mon ami ne donnait jamais d'explications (Exupéry).  
Ընկերս երբեք բացատրություն չէր տալիս:
- (4) En France, on n'a pas de pétrole, mais on a des idées (Devos).  
Ֆրանսիայում նավթ չկա, փոխարենը կան գաղափարներ:

2) Անորոշ հոգնակի և մասնական հոգերով կիրառված գոյականը en դերանվամբ ունի փոխարինելու հնարավորություն, Հմմտ. (5) օրինակը (6)-ի հետ.

- (5) Elle a des disques américains. Elle en a.  
Նա ամերիկյան ձայնասկավառակներ ունի: Նա դրանցից ունի:
- (6) Chez ce restaurateur on peut toujours boire d'excellent vin. Chez ce restaurateur on peut toujours en boire.  
Այս ռեստորանատիրոջ մոտ միշտ կարելի է հիանալի գինի խմել: Այս ռեստորանատիրոջ մոտ միշտ կարելի է դրանից խմել:

Ինչ վերաբերում է երկու հոգերի արտահայտած անորոշության իմաստին, ապա եղակի անորոշ հոգն արտահայտում է որակական, իսկ մասնական հոգը՝ քանակական (ծավալային) անորոշություն, որով ավելի մոտ է հոգնակի անորոշ des հոգին, քան եզակի անորոշին: Որոշ լեզվաբաններ des ձևը դիտում են նաև որպես մասնական հոգի հոգնակի ձև: Պետք է նշել, սակայն, որ ոչ թվարկելիությունն ընդհանրապես մերժում է հոգնակիությունը, ոչ թվարկելի գոյականը միշտ եզակի է: «Եզակիությունը, — նշում է Վ. Կոպիտինան, — պարտադիր չէ, որ թվարկելիություն ենթադրի,

իսկ վերջինս միշտ ենթադրում է եզակիություն<sup>8</sup>: Որպես ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ նյութ և վերացական հասկացություններ արասհայտող գոյականները մեծ քանակ ցույց տվող բառերից հետո դրվում են եզակի թվով, օրինակ՝ beaucoup de sable (շատ ավազ), trop d'eau (չափազանց շատ ջուր), beaucoup de bonheur (բառացի՝ շատ երջանկություն) և այլն: Ուրեմն ոչ թվարկելի գոյականների դեպքում պետք է խոսել ոչ թե թվի կարգի եզակիություն—հոգնակիություն ներքին հակադրություն մասին, որը չի տարածվում այդ գոյականների վրա, այլ թիվ—ոչ թիվ արտաքին հակադրության մասին, որի առաջին անգամը դրսևորվում է եղակիություն—հոգնակիություն, իսկ երկրորդը՝ մասնականություն—ամբողջականություն հակադրությունների միջոցով: Այս մոտեցումն է ընկած մեր վերլուծության հիմքում, այն արտացոլված է նաև վերը բերված գծապատկերում:

Սակայն ոչ թվարկելի գոյականը կարող է անցնել թվարկելիների շարքը, հատկապես այն դեպքում, երբ ստանում է որակական բնութագիր<sup>9</sup> կամ երբ վերջինը ենթադրվում է, ինչպես՝ du pain (անորոշ քանակով հաց)—un pain (հացատեսակ)—des pains (հացատեսակներ), du vin (անորոշ քանակով գինի)—un vin français (ֆրանսիական գինի)—des vins français (ֆրանսիական գինիներ), du bruit (ինչ—որ աղմուկ)—un bruit inattendu (անսպասելի աղմուկներ) և այլն:

Հասկացության ծավալի սահմանափակումն ըստ նյութի տեսակի, որակի, ձևի կամ այլ հատկանիշի հանգեցնում է ոչ թվարկելի գոյականը որպես թվարկելի ընկալելուն, այսինքն՝ ոչ թվարկելի գոյականի իմաստը նվազեցվում և սահմանափակվում է (ամբողջականացվում է) որոշակի ծավալի սահմաններում<sup>10</sup>. առարկան դիտվում է որպես մեկ ամբողջություն, հետևաբար՝ այն կարող է լինել ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվով: Որակ, հատկանիշ, երևույթ նշանակող վերացական գոյականները թվարկելի դառնալու դեպքում նշում են տյո՞ որակի, հատկանիշի, երևույթի կոնկրետ դրսևորումներ, ինչպես՝ un courage (խիզախություն), une intelligence (խելացիություն), des colères (զայրույթներ), des ennuis (հոգսեր): Հաճախ այդպիսի գոյականները հանդես են գալիս լրացումներով, ինչպես՝ un silence profond (խոր լուռություն), un bruit insupportable (անտանելի աղմուկ), un amour aveugle (կուլր սեր) և այլն: Թվարկելի դարձած ոչ թվարկելի գոյականի հետ կարելի է կիրառել նաև տարածական (ցուցայնական) առկայացուցիչներ՝ ցուցական կամ ստացական ածականներ, որը հնարավոր է նաև թվարկելիության իմաստի դեպքում, օրինակ.

8 В. Г. К о п ы т и н а. Место партитивного артикля в системе артикля современного французского языка. — Автореф. канд. дисс., Л., 1966, с. 8.

9 M. W i l m e t. Les déterminants du nom en français: essai de synthése.— "Langue française". Paris, 1983, N57, p. 27.

10 Վ. Գուրևիչը գտնում է, որ քանակական սահմանափակումը ընկած է որոշյալության կարգի հիմքում: В. В. Г у р е в и ч. О категории „определенность—неопределенность". — В кн.: "Проблемы языкознания и теории английского языка". Вып. 4, М., 1978, с. 27.

- (7) Cette eau etait bien autre chose qu'un aliment (Exuperly).  
Այդ ջուրը միայն սնուցման միջոց չէր:
- (8) Et de nouveau regnera ce silence solennel... (Mauriac).  
Եվ նորից կտիրի այդ Հանդիսավոր լռությունը...
- (9) Je n'ai jamais su vers quoi tendait cette puissance forcenee en moi et hors de moi (ibid).  
Եվ երբեք չիմացա, թե դեպի ուր էր ձգտում այդ կատաղի ուժը, որն իմ մեջ էր և ինձնից դուրս:
- (10) Ton indifference me fascine.  
Քո անտարբերությունն ինձ ապշեցնում է:

Թժից անցումը թ-ին կատարվում է ամբողջականության և եզակիությունից իմաստների միասնության միջոցով (գծապատկերում՝  $B_1 \leftrightarrow A$ ), որը թույլ է տալիս անցնել Հոգնակիության՝ ամբողջականություն + եզակիություն  $\Rightarrow$  Հոգնակիություն ( $B_1 A \rightarrow B$ ): Եզակիության և ամբողջականության իմաստների միասնության միջոցով կարող է տեղի ունենալ նաև Հակառակ անցում՝ թ-ից թ<sub>0</sub>: Այս դեպքում թվարկելի գոյականը ընկալվում է որպես ոչ թվարկելի: Հնարավոր է թ-ից թ<sub>0</sub> անցման երեք դրսևորում. 1) մասնական Հոգն ունի ընդհանրական-Հավաքական գործառույթ, 2) մասնական Հոգն ունի փոխանվանական գործառույթ, 3) մասնական Հոգն ունի ապագոյականացնող գործառույթ: Երեք դեպքում էլ գործում է եզակիություն + ամբողջականություն  $\Leftarrow$  մաս անցումը ( $AB_1 \rightarrow A$ ): Առաջին դեպքում, սակայն, դերակա է ամբողջի իմաստը, մասնական Հոգն այստեղ կատարում է ընդհանրական-Հավաքական գործառույթ և ենթադրում է զասից նրա առանձին անդամների տարանջատման անհնարինություն, չտարրորչված Հոգնակիություն, ինչպես (11) օրինակում:

1. Ընդհանրական-Հավաքական գործառույթ:

- (11) Il y a de la carpe dans cet etang.  
Այս ջրամբարում ծածան կա:

Մասնական Հոգի այս կիրառումը իմաստային և գործառույթային տեսանկյունից նման է Հոգնակի անորոշ Հոգին, Հմմտ. (11ա) օրինակը (11)–ի Հետ:

- (11ա) Il y a des carpes dans cet etang.  
Այս ջրամբարում ծածաններ կան:

Վերը բերված գծապատկերում գործառույթային այս նմանությունն արտացոլված է  $B \rightarrow A_1$  կետագծով:

Ամբողջականության գերակա իմաստը գործառույթային մեկ այլ ոլորտում ենթակա – գոյականին նախորդող դիրքում, արտահայտվում է որոշ-

11 Սլաքաձև Հավասարության նշանը ցույց է տալիս ընդգրկման Հարաբերության ուղղությունը:

յալ հողի միջոցով: Ինչպես մասնական հողի մասնակիություն, այնպես էլ ամբողջականության իմաստի դեպքում, որոշյալ հողը այս դիրքում մասնականի հետ գտնվում է լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, հմտ. (12) օրինակը (11)-ի հետ:

- (12) La carpe abonde dans cet etang.  
Այս ջրամբարը լի է ծածաններով:

Երկրորդ և երրորդ գեպքերում դերակա է մասի իմաստը, որը մի դեպքում ձեռք է բերում փոխանվանական արժեք, ինչպես (13) օրինակում, մյուս դեպքում մասնական հողն ունի ապագոյականացնող դործառույթ. նրան հաջորդող գոյականի առարկայական իմաստը վերափոխվում է որակի իմաստի, ինչպես (14) օրինակում:

2. Փոխանվանական գործառույթ:

- (13) Elle lit du Balzac.  
Նա Բալզակ (Բալզակի ստեղծագործությունները) է կարգում:

3. Ապագոյականացնող գործառույթ:

- (14) Il y a de l'homme dans le chien.  
Շան մեջ ինչ-որ մարդկային բան կա:

Նշված երեք դեպքերում էլ առկա է մասնական հողի ձևի և իմաստի ասիմետրիկ դրսևորումը, այսինքն՝ այն կիրառված է երկրորդային արժեքով:

Հայ լեզվաբանական գրականության մեջ մասնակիության իմաստի և գրա քերականական արտահայտչամիջոցների խնդիրը, սակավ բացառություներով, ուսումնասիրված չէ: Առաջին հայացքից դա բացատրվում է այն հանդամանքով, որ, ի տարբերություն Ֆրանսերենի, հայերենը հատուկ քերականական ձև չունի մասնակիություն արտահայտելու համար: Սակայն իրավիճակը միայն առաջին հայացքից է այդպիսին, քանի որ հայերենում մասնակիություն արտահայտելու միջոցը հենց ձևի բացակայությունն է՝ զրո հողը: Հողին նվիրված ուսումնասիրություններում կա՛մ զրո հողի վերաբերյալ միայն հպանցիկորեն է նշվում, և այն բնութագրվում է միայն որպես «անորոշի քերականական արտահայտման միջոց հայերենում»<sup>12</sup> կա՛մ զրո հողի մասնակիություն արտահայտելու խնդիրը

12 Հ. Զ. Պ Ե Ս Ր Ո Ս Յ Ա Ն. Որոշյալի ու անորոշի, անձի ու իրի առումները հայերենում. Երևան, 1960, էջ 52:

չի արծարծվում<sup>13</sup>: Ջրո հողով մասնակիությունն արտահայտելու մասին խոսուս է Մ. Ասատրյանը<sup>14</sup>:

Հայերենի փաստերը ցույց են տալիս, որ զրո հողը, բացի անորոշությունն արտահայտելուց, ունի նաև մասնակիության իմաստ, առանձնացնում է նյութ և վերացական հասկացություններ նշանակող գոյականների անորոշ մասը: Ասվածի ապացույցն են Բակունցի «Բրուտի տղան» պատմվածքից բերվող օրինակները.

- (15) Գետի ափին կանայք ցորեն են լվանում:  
 (16) Գունվար աղլուխի մեջ Անա գիղին փաթաթել է լավաչ, խորոված սիմինդր, սխտորած լոբի, մի քանի վարունդ և մի քիչ պանիր:  
 (17) Գինի՞ պիտի խմեն այդ կժից, թե աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի...  
 (18) Խղճահարություն է իջնում ինձ վրա, երբ տեսնում եմ նրա դգգզված մազերը և ցեխի շիթը այտի վրա:

Բերված նախադասություններում ցորեն, լավաչ, խորոված սիմինդր, սխտորած լոբի, մի քիչ պանիր, գինի, խղճահարություն գոյականները և անվանական խմբերը կիրառված են զրո հողով, և խոսքը դրանց անորոշ քանակի մասին է:

Բացի դրանից, Հայերենի փաստերը ցույց են տալիս նաև, որ այն օրինաչափությունները, որոնք ընկած են ֆրանսերենի մասնական հոգի գործառություն հիմքում թվարկելիության և ոչ թվարկելիության իմաստների տեսանկյունից, հատուկ են նաև Հայերենի մասնական արժեք ունեցող զրո հողին: Այսպես, ոչ թվարկելի գոյականը Հայերենում կարող է դասնալ թվարկելի, եթե ունի որակական բնութագիր, Հմմտ. չուր գոյականը (19) և (20) օրինակներում.

- (19) Հորթերը վախվխելով, պոչերը վեր պահած, մտնում են ծանծաղուտը, ջուր խմում, սարսուլով ետ գալիս (Բակունց):  
 (20) Ա՛յ պաղ ջրեր, գուլալ ջրեր,  
 Որ գալիս եք սարերից... (Թումանյան):

(19) օրինակում խոսքը ջրի անորոշ քանակի մասին է, իսկ (20) օրինակում ջուր գոյականի հոգնակի թիվ ստանալը պայմանավորված է նրա հատկանիշային բնութագրով պաղ և գուլալ:

Հայերենում ևս հնարավոր է անցում թ-ից թօ՞: Այս դեպքում զրո հողը, ինչպես և ֆրանսերենի մասնական հողը, կարող է ունենալ ընդհանրական-հավաքական, փոխանվանական և ապագոյականացնող գործառություններ: Առաջին դեպքում զրո հողով առկայացող գոյականը նշանակում է առարկաների չտարրորոշված հոգնակիություն, ամբողջություն: Այս

13 Э. Т у м а н я н. Артикли в современном армянском языке. Москва – Ереван, 1963, с. 130 – 182.

14 Մ. Ա ս ա տ Ր Յ Ա ն. Ժամանակակից Հայոց լեզվի ձևաբանության հարցեր. գիրք Ա. Երևան, 1970, էջ 243-244, ն ու յ ն ի Ժամանակակից Հայոց լեզու. Երևան, 1983, էջ 105:



երևույթին, սակայն, այլ մեկնաբանություն է արվում լեզվաբանական գրականության մեջ: Այսպես, Ա. Խաչատրյանը գտնում է, որ «Քաղաքում այդ օրը զինվոր երևաց» նախադասության մեջ զինվոր գոյականն ունի ընդհանուր-հասկացական իմաստ<sup>15</sup>: Պետք է նշել, որ զինվոր գոյականը այդ նախադասության մեջ ոչ մի դեպքում չի կարող ունենալ ընդհանուր-հասկացական իմաստ, քանի որ հայերենում ենթակայի դիրքում այդ իմաստի արտահայտումը հնարավոր չէ զրո հոդի միջոցով: Այս մասին մենք խոսել ենք այլ տեղում և այստեղ այդ խնդրին չենք անդրադառնա<sup>16</sup>: Իրականում զինվոր գոյականը վերը բերված նախադասության մեջ արտահայտում է ընդհանրական-հավաքական, չտարրոչված հոգնակիության իմաստ: Զրո հոդի այգպիսի կիրառման դեպքեր են նաև (21) և (22) օրինակները, որտեղ Հայ, Թուրք, ընկեր, բարեկամ գոյականներն արտահայտում են ընդհանրական-հավաքական, չտարրոչված հոգնակիության իմաստ.

- (21) Աշուն էր, երբ լուր բերին, թե մոտակա շրջանում Հայ, Թուրք խառնվել են իրար, գյուղեր են կրակում... (Բակունց):
- (22) Ընկեր, բարեկամ գրնացին, եկան,  
Կրկին հաշտության չեղավ մի հընար (Թումանյան):

Հայերենում, ինչպես նշեցինք, մասնական արժեք ունեցող զրո հոդը կարող է ունենալ նաև փոխանվանական գործառույթ, օրինակ.

- (23) Նա Չարենց (Չարենցի ստեղծագործություններից) է կարդում:

Ինչ վերաբերում է զրո հոդի ապագոյականացնող գործառույթին, այսինքն՝ հատկանիչ արտահայտելու նպատակով մասնական զրո հոդի կիրառմանը, ապա հայերենը չի արգելում (24) օրինակի տիպի նախադասությունների կազմության հնարավորությունը.

- (24) Նրա մեջ աղվես եմ տեսնում:

Այսպիսով, ի մի բերելով վերը շարադրածը, կարելի է ասել, որ մասնական հոդի իմաստագործառական սահմանների ընդլայնումը կապված է գոյականի թվարկելիության-ոչ թվարկելիության իմաստների, թվի կարգի և դրա մերժման միջև առկա գործառույթային դրսևորումների հետ: Ֆրանսերենի մասնական հոդի գործառույթային բոլոր դրսևորումներին համապատասխանում են հայերենի մասնական արժեք ունեցող զրո հոդի գործառույթները:

15 Ա. Ե. Խ ա չ ա տ Ր Յ Ա Ն. Հայերենի որոշիչ հոդի մի շարք առանձնահատկություններ. «Լրաբեր հասարակական գիտությունների». Երևան, 1975, № 4, էջ 101:

16 Ա. Բ ա ղ դ ա ս ա Ր Յ Ա Ն. Գոյականի առկայացուցիչների համատեքստային փոխարինելիությունը ֆրանսերենում և հայերենում. «Կանթեզ». Երևան, 2001, № 5, էջ 48-49:

СОПОСТАВЛЕНИЕ ЗНАЧЕНИЙ И ФУНКЦИЙ ФРАНЦУЗСКОГО  
ЧАСТИЧНОГО И АРМЯНСКОГО НУЛЕВОГО АРТИКЛЕЙ*АРМЕН БАГДАСАРЯН*

## Р е з ю м е

Особое место в системе артикля французского языка занимает частичный артикль, который употребляется с неисчисляемыми существительными. По мере расширения границ семантико-функциональных проявлений частичного артикля, он начал употребляться также и с исчисляемыми существительными, что является результатом асимметрии между его формой и грамматическим значением. Асимметрия формы и содержания лежит в основе употребления частичного артикля в его вторичных функциях, которыми являются: а) обобщенно-собирательная функция, б) функция метонимизации, в) десубстантивизирующая функция. Проблема нулевого артикля в армянском языке мало исследована. Сопоставление фактов армянского языка с французским дает возможность установить, что нулевой артикль в армянском языке имеет вторичные функции, тождественные с теми же функциями французского частичного артикля.

COMPARATIVE ANALYSIS OF FRENCH PARTITIVE AND ARMENIAN ZERO  
ARTICLES' MEANING AND FUNCTIONS*ARMEN BAGHDASARYAN*

## S u m m a r y

The partitive article, which is used with uncountable nouns, takes a special place in the system of French articles. With the extension of its semantic and functional manifestations, the partitive article is used with countable nouns as well, which results from the asymmetry between its form and grammatical meaning. The asymmetry of the form and the content brings about secondary functions of the partitive article which are: a) collective generalizing function, b) metonymization function, c) desubstantivization function. The problem of the zero article in Armenian requires further study. Comparative analysis of French and Armenian data allows us to arrive to the conclusion that the semantic and functional manifestations of Armenian zero article are similar to those of French partitive article.